



« 25 » 11 2011 թ.
Աշխ.հեռախոս 0231 6 71 44

N 23
Բջջային՝ 094 404 402


ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ, ՊԱՐՈՆ՝
Ա.ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ


Կից Ձեզ է ներկայացվում Արմավիրի մարզի
Դաշտի գյուղական համայնքի 21.11.2011 թվականին
կայացած ավագանու թիվ 04 արտահերթ նիստում
ընդունած որոշումները:

Առդիր՝ 9 թերթ:

Դաշտի գյուղական համայնքի ղեկավար՝



Հ. Պետրոսյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2011թ.

թիվ 01

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
21.11.2011թ. ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 04 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՐՑԵՐԻ
ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական
ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով.


ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել օրակարգի հարցերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝



Աշոտ Աբրահամյան




Անահիտ Աղաջանյան



Սամվել Սահակյան



Սարգիս Գևորգյան



ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
2011թվականի նոյեմբերի 21
գ.Դաշտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՆԱԿԱՆ
ՄԱՐԶԻ ԴԱՇՏՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՅԻՆՈՒԹՅԱՆ
2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 03-Ն
ԹԻՎ 03/ՈՒՐԻՍ/ՍԿԻ
0470370



ՕՐԱԿԱՐԳ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ
2. ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱԻՆ
3. ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԶԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԿՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱԻՆ
4. «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՆԿԻՐԱՏԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱԻՆ
5. ԴԱՇՏԻ ԳՅՈՒԴԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱԻՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱԿԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2011թ.

թիվ 03-Ն

ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 03-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵԶ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դաշտ համայնքի ավագանու 2010թվականի նոյեմբերի 29-ի «Դաշտ գյուղական համայնքի 2011թվականի բյուջեի հաստատման մասին թիվ 03-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

- 1) որոշման 1-ին կետի 1-ին տողի «3 410 000» թիվը փոխարինել «2 810 600»թվով,
- 2) որոշման 2-րդ կետի 1-ին տողի «12 340 100» թիվը փոխարինել «12 040 100»թվով,
- 3) որոշման 2-րդ կետի 2-րդ տողի «700 000» թիվը փոխարինել «400 000» թվով,
- 4) որոշման 3-րդ կետի 1-ին տողի «8 923 100» թիվը փոխարինել «8 823 100» թվով,
- 5) որոշման 3-րդ կետի 3-րդ տողի «450 000» թիվը փոխարինել «250 000» թվով,
- 6) որոշման 3-րդ կետի 12-րդ տողի «600 000» թիվը փոխարինել «300 000» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Աշոտ	Աբրահամյան
	Անահիտ	Աղաջանյան
	Սարգիս	Գևորգյան
	Սամվել	Սահակյան



ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
 2011թվականի նոյեմբերի «21»
 գ.Դաշտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2010թ.

թիվ 03-Ն





ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետի պահանջներով՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

- Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2012 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:


ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	Անահիտ	Աղաջանյան
	Սարգիս	Գևորգյան
	Աշոտ	Աբրահամյան
	Սամվել	Սահակյան

 ԳՐԱՆԴ ԴԵՏՐՈՍՅԱՆ



2011թվականի նոյեմբերի 21
գ.Դաշտ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ
ԴՐՈՒՅՔԱԶՎՓԵՐԸ**

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների հիմնական օբյեկտների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 6000 /վեց հազար/ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 35000 /երեսունհինգ հազար/ դրամ:

2. Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1000 / մեկ հազար/ դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2000 /երկու հազար/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բնօրհանությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 500/ հինգ հարյուր / դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ:

5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել`

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` 6000/վեց հազար/ դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար` հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում` յուրաքանչյուր եռամսյակի համար` 6000 / վեց հազար/ դրամ:

6. Համայնքի տարածքում`

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար` 350 դրամ.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 160 000 /մեկ հարյուր վաթսու հազար/ դրամ:

7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50.000 /հիսուն հազար/ դրամ:

8. Համայնքի տարածքում` առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար` տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել`

1) առևտրի օբյեկտների համար` 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար` 50 000 /հիսուն հազար/ դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար` 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.

4) խաղատների կազմակերպման համար` 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար` 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար` 100 000 /հարյուր հազար/ դրամ:

9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել`

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2000 /երկու հազար/ դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար` 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար` 1000 /մեկ հազար / դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար` 700 /յոթ հարյուր/ դրամ:

10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:

12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:

13. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2011թ.

թիվ 04-Ն

ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՍԻՆ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Դաշտ համայնքի բյուջեից «Հայաստան» համահայկական հիմնադրամին
կատարել նվիրատվություն 25 000դրամ գումար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	Անահիտ	Աղաջանյան
	Սարգիս	Գևորգյան
	Աշոտ	Աբրահամյան
	Սամվել	Սահակյան



ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
2011թվականի նոյեմբերի 21
գ.Դաշտ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ԴԱՇՏ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

« 21 » նոյեմբերի 2011թ.

թիվ 05





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.


Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և նկատի ունենալով Դաշտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՈՐՈՇԵՑ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ գյուղական համայնքի՝ սոցիալապես անապահով 13/տասներեք/ընտանիքների տրամադրել օնությամբ 375 000 /երեք հարյուր յոթանասուն հինգ հազար/դրամ ընդհանուր գումարով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

	-----	Անահիտ	Աղաջանյան
	-----	Սամվել	Սահակյան
	-----	Աշոտ	Աբրահամյան
	-----	Սարգիս	Գևորգյան



ՀՐԱՆԴ ԴԵՏՐՈՍՅԱՆ
 2011 թվականի նոյեմբերի «21»
 գ.Դաշտ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՄՐԶԻ ՈՒՇԻ ԳՆԱԿԱՆ ԳՆԱՍՅՆԱԴՐԱՆ
2011ԹՎԱԿԱՆ



**Ցուցակ
Դրամական օգնություն ստացող ընտանիքների**

1. Մկրտչյան Ռուզաննա --- 30 000դրամ,
2. Մեսրոպյան Սահակ --- 30 000դրամ,
3. Մխիթարյան Երվանդ --- 30 000դրամ,
4. Առաքելյան Արաքսյա --- 30 000դրամ,
5. Հովհաննիսյան Հերմինե --- 30 000դրամ,
6. Սահակյան Անահիտ --- 30 000դրամ,
7. Համբարձումյան Լուսինե --- 30 000դրամ,
8. Իսկանդարյան Զավեն --- 30 000դրամ,
9. Գևորգյան Լուսյա --- 30 000դրամ,
10. Կարապետյան Սամվել --- 30 000դրամ,
11. Հունոյան Ռոբերտ --- 25 000դրամ,
12. Սահակյան Նիկողոս --- 20 000դրամ,
13. Խաչատրյան Գայանե --- 30 000դրամ: